

- 65 նորա է վախըՖ: Այլ եւ երախտաւորաց եւ բարերարաց մերոց Տէր Աստուած ողորմեսցի. եւ նմա փա՛ռք յաւիտեանս. ամէն:

17. ԱՐՇԱԻԱՆՔԻ ՍՈՒԼՏԱՆ ՕՍՄԱՆԻ Ի
ՎԵՐԱՅ ԼԵՀԱՑ. 1622

- Դարձեալ ի թվ. Հայոց ՌՀԱ (1622) ել հողմն հարաւային, հպարտ եւ գոռոզ, փքացեալ եւ լցեալ հողմով չարութեան՝ Օսման անուէն, որդին սուլթան Ահմատին, որ ուսմանէ սաղայելեան, խորհեցաւ խորհուրդ չար եւ զազիրատութիւն վասն քրիստոնէից, մանաւանդ Լէհցոցն՝ դալ ի վերայ նոցա ի պատերազմ, ջնջել եւ ի սպառ կորուսանել: Եւ արարեալ իւր խորհրդակից զոմանս՝ ետ կանչեցնել ի Ստամպոլ՝ եթէ եօթն տարի սէֆէր ունիմ ի վերայ Լէհու: Եւ ինքն պատրաստէր, կողմէր զօրս մեծաւ պատրաստութեամբ:

- Իսկ մուֆտին եւ մեծամեծք եւ վազիրն ոչ հաճեցան ընդ այն. ասէին թէ Մի առներ ոչ զայդ զի ուխտ եւ դաշինք ունիմք հետ նոցա. եւ ոչինչ փնաս կամ նենկութիւն գտաւ ի նոսա. այլ եւ մուֆտին չերետ Ֆէթիայ: Իսկ նա քանզի մանուկ էր տիօք, յիմար մտօք, գոռոզ եւ հպարտ ըստ Ռորովամայ, ոչ լուաւ խրատու ծերոց եւ իմաստնոց, այլ հոմանեաց իւրոց եւ նմանեաց. ոչ յուսացաւ յԱստուած, այլ ի մեծութիւն եւ ի զօրս իւր անթիւ. արհամարհեաց զմեծն եւ զօրէնսզիրն իւր. զի ետ աքտորել